FRANCKESCHE
STIFTUNGEN

# Alte Drucke

## Oskeay Dowṙn Dpratan. Vasn norek deṙakirtʻ ew xakavaržmankancʻ haykazowneacʻ

**Vanandeci, Mattēos**
**Ġowkas <Vanandeći>**

**Amsterdam, 1699**

**Nutzungsbedingungen**
Die Digitalisate des Francke-Portals sind urheberrechtlich geschützt. Sie dürfen für wissenschaftliche und private Zwecke heruntergeladen und ausgedruckt werden. Vorhandene Herkunftsbezeichnungen dürfen dabei nicht entfernt werden.
Eine kommerzielle oder institutionelle Nutzung oder Veröffentlichung dieser Inhalte ist ohne vorheriges schriftliches Einverständnis des Studienzentrums August Hermann Francke der Franckeschen Stiftungen nicht gestattet, das ggf. auf weitere Institutionen als Rechteinhaber verweist. Für die Veröffentlichung der Digitalisate können gemäß der Gebührenordnung der Franckeschen Stiftungen Entgelte erhoben werden.
Zur Erteilung einer Veröffentlichungsgenehmigung wenden Sie sich bitte an die Leiterin des Studienzentrums, Frau Dr. Britta Klosterberg, Franckeplatz 1, Haus 22-24, 06110 Halle (studienzentrum@francke-halle.de)

**Terms of use**
All digital documents of the Francke-Portal are protected by copyright. They may be downladed and printed only for non-commercial educational, research and private purposes. Attached provenance marks may not be removed.
Commercial or institutional use or publication of these digital documents in printed or digital form is not allowed without obtaining prior written permission by the Study Center August Hermann Francke of the Francke Foundations which can refer to other institutions as right holders. If digital documents are published, the Study Center is entitled to charge a fee in accordance with the scale of charges of the Francke Foundations.
For reproduction requests and permissions, please contact the head of the Study Center, Frau Dr. Britta Klosterberg, Franckeplatz 1, Haus 22-24, 06110 Halle (studienzentrum@francke-halle.de)

**urn:nbn:de:gbv:ha33-1-33369**

Visual Library

Durrn himastutjun
ie

Janua Sapientiae

Amsteldam 1699.

Lehr-büchlein
für
Armenische Kinder
in
Armenischer Sprache
durch Besorgung
des
Erzbischofs, D. Lucae
Nurigianidis.
cfr. Jo. Joach. Schroederi
Thesaurus Linguae Armenicae.

# ԴՈՒՌՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ։

✠ ✠ ✠

Մանուկ մըրգա ձայրծ՝
Ն ուրօղ ուսու մտան,
Ի՛ ընդհայր ըրժ օչեա
Ղէղմանակ գայր նման։
Զի բողբոջ ծա ուոյ՝
Ն համայն ուէր մտան,
Անփոփոփ ըուէը ուէաղ
՚ի նշափոր ճու բան։



Franckesche Stiftungen
Haupt-Bibliothek
Halle/Saale

# ՈՍԿԵԱՅ
# ԴՈՒՌՆ
## ԴՊՐԱՏԱՆ:

Վ՛ն

Նորեկ զեռակիրթ և խա
կավարժ Մանկանց Հայ
կազունեաց:

Յօրինեալ երկասիրութեամբ
Մատթէոսի՝ և Ղուկասու
Տրուպ Դպրաց Վանան
դեցւոց:

Տպեալ՝ և ծախիւք Նուաստ Եպ
իսկոպոսին Թօմայ Վանանդեցւոյ՝
՚ի Լոյս ածել:

՚Ի Հայրապետութեան ա
մենից Հայոց Տեառն
Նահապետի:

Յամի Տեառն 1699:

---

ՅԱՄՍՏԵՐԴԱՄ:

Եթէ մարտիկ ոք լիցի՝ ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինին մարտիցի։ 2. Տիմ. 2. 5։

Յունարէն։

Եա՛ն աթլէ՛ տիս, ու ըստեփա նուտէ, եա՛ն մի՛ նոմի՛մօս աթլի՛սի

Լատիներէն։

Նի՛ չէ՛րթատ ին ագօ՛նէ, նօն կօրօնա՛տուր՝ նի՛սի լէջի՛տիմէ չէրթա՛վէրիտ։




՚Ի սեպհական գողթ նահանգէ
Թովմաս տըրուպ զձեզ աղաչէ.
յիշել յ՚աղօթս ՚ի սէր սրտէ,
զի քուժեսցի ՚ի չար ախտէ։

Սկիզբն Նշանագրին գրոց։

Յանուն Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն Սրբոյ։

✠ Օգնեա՛ ինձ։

Ա Բ Գ Դ Ե
Զ Է Ը Թ Ժ
Ի Լ Խ Ծ Կ
Հ Ձ Ղ Ճ Մ
Յ Ն Շ Ո Չ
Պ Ջ Ռ Ս Վ
Տ Ր Ց Ւ Փ
Ք Օ։

Երկաթագիր տեսակն ։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը
Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ
Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն
Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ
Տ Ր Ց Ւ Փ Ք Օ ։

Մե Տե Րե

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ
կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ
տ ր ց ւ փ ք օ ֆ և ։

Մեջանագիր տեսակն ։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ
Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ
Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ
Ր Ց Ւ Փ Ք Օ Ֆ ։

Մե Տե Րե

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ
ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր
ց ւ փ ք օ ֆ և ։

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն
շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ և ։

Փոքրագիրն տառն ։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ
Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս
Վ Տ Ր Ց Ւ Փ Ք Օ ։ Ֆ

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն
շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ և ։
ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ
ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ և ։

Ձայնաւորք ։

ա՛ ե՛ է՛ ը՛ ի՛ ո՛ օ՛ ու՛ ։

Երկձայնք ։

աւ եւ կամ և էւ ըւ իւ ու
այ ոյ ։

Վանկք ։

Աբ. եբ. էբ. ըբ. իբ.
ոբ. օբ. ուբ. այբ. ոյբ ։
Բա. բե. բէ. բը. բի.

բո

բմ բօ • բմւ • բոյ • բոյ :
Բան • բև • բէն • բրն բին
Եաբ, եագ, եադ, եազ
եաթ, եաժ, եալ, եախ
եած, եակ, եահ եաձ, եաղ
եաճ, եամ, եայ, եան, եաշ
եաչ, եապ, եաջ եառ, եաս
եավ, եատ եար, եաց եաւ
եափ, եաք, եաֆ :
Իւբ, իւգ, իւդ, իւզ • ևլ
Ուլթ, ուժ, ուլ, ուխ • ևլ
Ոյծ, ոյկ, ոյձ, ոյղ ոյճ այն :

Անուանք Նախահարցն :

Ադամ • Սէթ • Ենովս •
Կայնան • Մաղաղիէլ •
Յարեդ Ենոք Մաթու-
սաղայ • Ղամէք • Նոյ •
Սեմ

Սեմ Արփաքսադ, Սա
ղայ Հեբեր Փաղեկ Ռա
գաւ Սերուք Նաքոր,
Թարայ:

Անուանք Նահապետաց:

Աբրահամ Իսահակ Յա
կոբ Ղեւի Կահաթ Ամրամ

Անուանք Մարգարէից:

Մովսէս Դաւիթ Սաղոմոն
Յոբ Եսայեաս Երեմիաս
Եզեկիէլ Դանիէլ Յովէ
աս Յովէլ Ամովս Աբդի
աս Յովնան Միքիաս Նա
հում Ամբակում Սոփոնի
աս Անգէայ Զաքարիաս
Մաղաքիաս:

12 Առաքելոցն Քրիստոսի:

Պետրոս որ և Կեփաս և Սիմոն

Անդրէաս՝ եղբայր Պետրոսի.
Յակոբոս Զեբեդեայ եւ Յովհան
նէս եղբայր նորին, որք անուա
նեցան Որդիք Որոտման. Փի
լիպպոս. Բարթողոմէոս. Թով
մաս. Մատթէոս. Յակոբոս
Ալփեայ. Ղեբէոս որ Թադ
դէոս՝ եւ Յուդաս Յակոբեան
ասի. Սիմոն, կամ Շմաւոն Կա
նանացի, որ եւ Նախանձայոյզ.
Յուդաս իսկարիովտացի, որ մատ
նեաց Հրէից զՏէրն մեր, եւ ե
ղեւ որդի կորստեան, որոյ Առա
քելութեն վիճակն անկաւ ՚ի վե
րայ Մատաթեայ:

12 Կենդանակերպքն:

Խոյ. Ցուլ. Երկաւոր. Խեցգետին. Առիւծ. Կոյս. Կշիռ. Կարիճ. Աղեղնաւոր. Այծեղջիւր. Ջրհոս. Ձուկն:

12 Ամիսք Տարւոյն:

Յանուար. Փեբրուար Մարտ Ապրիլ Մայիս Յունիս Յուլիս Օգոստոս Սեպտեմբեր Հոկտոբեր Նոյեմբեր Դեկեմբեր:

Հա

Հայոց։

Նաւասարդի Հոռի Սահմի Տրէ Քաղոց Արաց Մեհեկի Արեգի Ահկի Մարերի Մարգաց Հրոտից Աւելեաց։

Աղարեայ։

Շամս Ադամ Շբաթ Նիխայ Գամար Նադար Թիրայ Գամայ Համիրայ Արամ Օվդան Նիրհան Աւելեաց։

Եօթն Ազատարհեստին։

Քերականութիւն Տրամաբանութիւն Ճարտասանութիւն Երաժշտականութիւն Թուականութիւն Երկրաչափութիւն Բանաստեղծութիւն։

Եօթն Մոլար Աստեղքն։

| | | |
|---|---|---|
| Երեւակ. | Զօհալ | ♄։ |
| Լուսնթագ. | Մուշթարի | ♃։ |
| Հրատ. | Մառիխ | ♂։ |
| Արեգակն. | Շամս | ☉։ |
| Լուսաբեր. | Զօհրա | ♀։ |
| Փայլածու. | Օտարիտ | ☿։ |
| Լուսին. | Ղամար | ☾։ |

Եօթն Հրաշալիքն։

Ոսկի արծաթ պղինձ երկաթ արճիճ կլայեկ սնդիկ։

Զոր

Չորք եղանակք տարւոյն ։
Գարուն ամառն աշուն ձմեռն ։

4 Կողմանք Աշխարհի ։
Արեւել արեւմուտ հիւսիս հարաւ

Չորք Մասունք Աշխարհի ։
Ասիա ափրիկէ ամերիկէ եւրօպա

4 Գետք Դրախտին ։
Փիսոն գեհոն տիգրիս եւ Փրատ ։

4 Տարերք ։
Հող, Ջուր՝ Օդ, Հուր ։

4 Հեղուկք ։
Արիւն սեւ մաղձ շեկ մաղձ մաղաս ։

4 Առաքինութիւնք ։
Ջերմութիւն, ցրտութիւն չորութիւն, եւ խոնաւութիւն ։

4 Գործոն Թուաբանին ։
Բարդել հանել բազմացուցանել՝ եւ բաժանել ։

4 Մասունք Քերականութեան ։
Գիր, վանկ, բառ՝ եւ բան ։

Գուլն

Դուռն Քերականութեան ։

# ՔԵՐԱԿԱ ՆՈՒԹԻՒՆ

Է արհեստ բարւոք խօսելոյ
և ուղղապէս գրելոյ։
Մասունք Գործականք և ուղ
ղածորիչք Քերականութեան
են չորք. Ուղղագրութի՟, Առո
գանութի՟, Ստուգաբանութի՟
և Շարադրութիւն։
Մասունք ուղղելիք և 'ի գործ_
ածելիք են ևս չորք. Գիր,
Վանկ, Բառ, և Բան։
Գիրն ուղղի յՈւղղագրութե՟ն.
Վանկն՝ յԱռոգանութենէն.
Բառն՝ յՍտուգաբանութե՟ն.
Բանն, 'ի Շարադրութենէն։
Գիր որ և Տառ՝ է տարր

ասի, է առաջին՝ և նուաստ
մասն՝ և նիւթ ձայնից, բա
ռից՝ և բանից:

Գիրն Հայոց գտաւ յամի
Տ̃ն 422. Ամենայն շնոր
հօք և երկասիրութ̃բ բազ
մերախտ Հարցն Սրբոց
Իսահակայ մերոյ Հայրա
պետին՝ և Մեսրօպայ
Նուամեծ Վարդապետին:

Յառաջ տառք մերոյ ազգին է
ին Թ̃ւով 36. իսկ յետոյ 'ի Յու
նաց առին, օ՝ ֆ: ընդ որս լինին
միահաղոյն 38 տառք:

յ'Ի. յս 38 տառից 8 են ձայնաւ
որք. որք ինքեամբք միայն՝ և իւ
րովի ձայնս հանեն. նաև զբաղա
ձայնս հնչեցուցանեն. և են այ
սոքիկ. ա. ե. է. ը. ի. ո. օ. ւ:

Բաղաձայնք են 30. որք 'ի ձայ
նաւորաց առնուն զձայնս. զի ին
քեամբք

քեամբք միայն և իւրովի ոչ կա
րեն ձայն հանել առանց նոցա։
Ց․ տառս են կարճ և բաղաձայն
Ի․ որպէս՝ հայր հաւր, լոյս՝ լուս
Ն․ բաղաձայն տառիցն ենն ասին
խածք յոյրք ստուարք և Թաւ՛ք
որք թաւ շնչով արտաբերին՝ և
են․ դ․ թ․ խ․ չ․ ջ․ ռ․ ց․ փ․ ք։
Տասն և մէկն լերկնուրբ՝ և բա
րակ։ լ․ ծ կ․ ձ․ մ․ ն շ․ պ ս․ տ ր։
Վեցն՝ միջակ։ բ գ դ ժ ձ ղ։
Չորքն նայք և կակուղք․ ղ մ րն
Մետասանքն կիսաձայնք։ զ ժ խ
ծ մ ն շ ո ս ր ց։ Երկնակք են այ
սոքիկ․ բ գ դ ղ թ ժ խ ձ շ չ ջ ռ
ց փ ք Փ։ աւրն կրկնակք՝ զի՛ իւրա
քանչիւր կրկնակ գիր յ՛երկուց
բաղաձայնից զօրանայ։

Այս բաժանումն տառից պատշաճն մա
նաւանդ Բանաստեղծից՝ և Երաժշտա
կանաց։

Տառից մերոց այլքն աւրն մար
մնածիրք․ որք զբոլոր մարմինս
ունին՝ 'ի մէջ խազին՝ և են այ
սոքիկ․ [illegible]։

Ա. յլքն

Նոյնք գլխաւորք. ԷԳԴՂԸԼՀ ՕՂՀՊՁՐՑ: Նոյնք՝ Վերջա-ւորք. եէծծճճնւ: Նոյնք Միջաւորք. բէխկհյիֆք:

Այս կանոն վայելչէ Գրութեան:

Կարգ և դաս լծորդ տառից են ութ. փ բ պ մ. խ ք գ կ. թ դ տ. ց ձ ծ զ ս. չ շ ժ. լ ղ ն. ջ ճ. ռ ր:

Ո. աճելոյն այսպիսն յաղագս տառից:

'Ի գրոյ յառաջանայ վանկն. 'ի վանկէ բառն և 'ի բառից բանն:

Կէտք են երեք. ստորատ, միջակէտ. և վերջակէտ:

Ոլորակ երեք. շեշտ բութ և պարոյկ: Հագագ երկու՝ թաւ և լերկ: Նմանակ երկու. սուղ և երկար: Կիրք են և ս երկու. ընթա_մնայ, և մակակէտ՝:

Սանդ է ձայն, կամ հըն չումն յօդաւոր:

Բառ է ձայն յօդաւոր՝ և նշանակող:

Բառից կարգ, և դասք տա

Այս են Թ. Անուն Դերանուն Բայ Ընդունելութիւն Յօդ Առանուն, որև Նախդիր. Առբայ կամ Մակբայ Շաղկապ, և Միջարկութիւն։

Անուն է՛ բառ հոլովական, և անժամանակ։

Բայ է՛ բառ լծորդական, և ժամանակաւոր։

Դերանուն է՛ բառ Թէրի՝ հոլովական փոխան անուան դիմորոշ։

Ընդունելութիւն է՛ բառ յ'անուանէ և 'ի բայէ հաղորդեալ։

Յօդ է՛ բառ հոլովական՝ առընչական, և անժամանակ։

Նախդիր է՛ բառ անհոլով՝ որ կից և առընթեր անուան երթայ։

Մակբայ է՛ բառ անհոլով կից և առընթեր բային։

Շաղկապ՝ է՛ բառ անհոլով՝ կապօղ երկուց՝ կամ յոլով բառից։

Միջարկութիւն է՛ բառ անհոլով ախտից կմ՛ կրից նշանակօղ։

Տեսակ բառից են երկու. Նախագաղափար, Գ՝ հոգի։ Ընդօ

ղական, կամ ածանցական՝ որպ
հոգևոր։
Չև բառից են երեք․ Պարզ,
հուր․ Բարդ՝ հրձիգ․ Յարա
բարդ՝ հրձիգաշէկ։
Ըրդ՝ Չև, Տեսակ և Դասք են
և ասին հասարակ պարագայք,
կամ պատահմունք ամ բառից։
Այն են յատուկ և առանձին պա
րագայք՝ կամ պատահմունք բա
ռից․ որպիսիք են որակութիւն
քանակութի, սեռ՝ անկ, հոլով՝
թիւ՝ ժամանակ՝ եղանակ, դէմ
յօդորդութի, նշանակութի՝ և այլ։
Որոց ձաւելն մի ըն միոջէ՝ ոչէ
տեղի՝ աստ և այժմ։

## Բան է շարամանութիւն յօրով՝ և զանազան բառից։

«Լորագրեալս» և նորաձևերս գաղափար ամ
տեսակ բառից․ յօրինեցեալ յ՚ոսմեմնէ ապա
շնորհ Գ արքունեաց Ս անանուեցայ։

Ի մմ զայս խրատ։

Համօրէն պարզ անուանք, որք
զմի յ՚այս ձայնաւորացս ունին․

տեռ

աեոօւ , ըն հոլովս և 'ի լծորդու
թիւնս անխախտ մնան ։ և որք
ունին , ի ու . չքանան ։ իսկ որք ու
նին՝ է . փոխեն ընդ է 'ի ի ։ օրինակ
Ա . մնայ , դանձ՝ ձի . ձեմ ։
Ե . մնայ , դեղ՝ ղոյ . ղեմ ։
Ո . մնայ , գործ՝ ծոյ . ծեմ ։
Օ . մնայ , տօն՝ նի . նեմ ։
Ւ . մնայ , նիւթ՝ թոյ . թեմ ։
Ի . չքանայ , գիր՝ գրոյ . գրեմ ։
ՈՒ . չքանայ , սուր՝ սրոյ . սրեմ ։
Է փոխի 'ի ի , սէր՝ սիրոյ . սիրեմ
Իսկ բառք՝ որք ունին ոյ և զայլ
որինչ միւս բաղաձայն զկնի ոյ՝ որ
պիտիք են . յոյս՝ լոյս՝ յոյզ՝ փոյթ
լոյծ և այլ . ըն հոլովս և 'ի լծոր
դութիս փոխարկեն ընդ յ 'ի ու .
ոմն՝ յուսոյ յուսալ՝ լուսոյ լու
սել՝ փութոյ փութալ . և այլ ։
Որոյ եղեալ՝ իմն զայս ևս , զի
Բայք համայնք Ա . բամեն ի Բ . ե
րականութեն վերջանման քառա
դիմի վերջաւորութեն՝ մ . եմ . ամ
ում . և իմ ։ զորս ամ այս հետևեալ
նորագիւտ գաղափարաւս դիւ
րաւ

բանամոք կարէ լծորդել՝ միայն թէ՝ ըն կատարեալ ժամանակս՝ և յ'ապառնիս, նաև, ըն հրամայականս երկրորդ՝ և երրորդ լծորդութեան՝ որք վերջանան ամ, և ում, բայց ոմանք փոխեն զընդհնուր շաւիղն և զկարգն։ Նայց՝ զորինչ գրեմք աստ, եթէ դեռակերթ Մանկունք բարոք 'ի միտառցեն, դիւրաւ անկարգ բայիցն վերահասու լինին, երբ հմուտ, և բուն Պասատուաց համդիպլին։ յ'Ա. յսհետևեալ գաղափարոջս՝ ուր այսպէսի ~ նշաներևէ՝ ա՛նդ. անկարգ' և արտուղի բայք փոփոխին։

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | նե | րև | ըթ։ | |
| Սու. | Ա.ու. | Ոու. | Իու։ | |
| Սամ. | Ա.մ. | Ոամ. | Իմ։ | Աշակեան |
| եա. | աա. | ուա. | իա։ | Եզա։ |
| ե. | այ. | ու. | ի։ | Ներկայ |
| եմք. | ամք. | ումք. | իմք։ | Ժամանակ |
| եք. | այք. | ուք. | իք։ | Յոգնական |
| են. | ան. | ուն. | ին։ | Եզա։ |

Իսէ

Ⴄⴑⴄ · ⴀⴢⴄ · ⴓⴄ · ⴄⴄ : Ⴑⴞⴀ
ⴄⴄⴐ · ⴀⴢⴄⴐ · ⴓⴄⴐ · ⴄⴄⴐ : Ⴌⴀⴇⴄ
ⴄⴐ · ⴀⴢⴐ · ⴀⴢⴐ · ⴄⴓⴐ : ⴎⴀⴐ ⴛⴈ :
ⴄⴀⴇ · ⴀⴢⴀⴇ · ⴓⴀⴇ · ⴄⴀⴇ : Ⴢⴍⴂ
ⴄⴄⴇ · ⴀⴢⴄⴇ · ⴓⴄⴇ · ⴄⴄⴇ : Ⴁⴄⴋ :
ⴄⴄⴌ · ⴀⴢⴄⴌ · ⴓⴄⴌ · ⴄⴄⴌ :
Ⴄⴂⴄ · ⴀⴂⴄ ⴍ · ⴄ · ⴄⴂⴀⴢ : Ⴑⴞⴀ
ⴄⴂⴄⴐ · ⴀⴂⴄⴐ ⴍ · ⴄⴐ · ⴄⴂⴀⴐ : Ⴉⴀⴎⴀ
ⴄⴀⴂ · ⴀⴂ ⴍ · ⴍⴑⴍ · ⴄⴂⴀⴓ : ⴐⴄⴀⴊ :
ⴄⴂⴄⴌⴇ · ⴀⴂⴄⴌⴇ ⴍ · ⴄⴌⴇ · ⴄⴂⴀⴇ : Ⴢⴍⴂ
ⴄⴂⴄⴇ · ⴀⴂⴄⴇ ⴍ · ⴄⴇ · ⴄⴂⴀⴢⴇ : ⴌⴀⴞⴀⴌ :
ⴄⴂⴄⴌ · ⴀⴂⴄⴌ ⴍ · ⴄⴌ · ⴄⴂⴀⴌ :
Ⴄⴂⴄⴂ · ⴀⴂⴄⴂ ⴍ · ⴄⴂ · ⴄⴂⴀⴢⴂ : Ⴑⴞⴀ
ⴄⴀⴂⴄⴀ · ⴀⴀⴂⴄⴀ ⴍ · ⴂⴄⴀ · ⴄⴀⴂⴄⴀ : Ⴌⴀⴇⴀⴓ
ⴄⴀⴂⴄ · ⴀ ⴀⴂⴄ ⴍ · ⴂⴄ · ⴄⴀⴂⴄ : ⴌⴄ ·
ⴄⴀⴂⴓⴇ · ⴀⴀⴂⴓⴇ ⴍ ⴂⴓⴇ ⴄⴀⴂⴓⴇ : Ⴢⴍⴂ
ⴄⴀⴂⴄⴇ · ⴀⴀⴂⴄⴇ ⴍ · ⴂⴄⴇ · ⴄⴀⴂⴄⴇ : ⴌⴀⴞⴀⴌ :
ⴄⴀⴂⴄⴌ · ⴀⴀⴂⴄⴌ ⴍ · ⴂⴄⴌ · ⴄⴀⴂⴄⴌ :
Ⴋⴀ · ⴀⴍ · ⴍⴑⴍ · ⴄⴀⴂ : Ⴑⴞⴀ :
ⴋⴈ ⴄⴐ · ⴋⴈ ⴀⴐ · ⴋⴈ ⴓⴐ · ⴋⴈⴄⴐ : Ⴢⴐⴀⴋⴀⴢ
ⴄⴂⴄⴇ · ⴀⴂⴄⴇ ⴍ · ⴄⴇ · ⴄⴂⴀⴐⴈⴓⴇ : ⴀⴞⴀⴌ :
ⴋⴈ ⴄⴇ · ⴋⴈ ⴀⴢⴇ · ⴋⴈ ⴓⴇ · ⴋⴈ ⴄⴇ : Ⴢⴍⴂ :
Ⴍ ⴄⴊ · ⴀⴂⴍⴊ ⴍ : ⴐⴌⴄⴓⴌⴄⴊⴓⴄ ⴌⴄⴐⴞⴀⴢ
ⴄⴀⴊ · ⴀⴂⴄⴀⴊ ⴍ · ⴄⴂⴄⴀⴊ ⴄⴀⴊ ⴀⴛ : ⴞⴄⴐⴊ :
ⴄⴊⴐⴂ · ⴀⴊⴐⴂ · ⴊⴐⴂ · ⴊⴄ : Ⴌ ⴂⴀⴓⴌⴄ
Ⴢⴀⴐⴂ

# Հարց՝ և Պատասխանի Բանասիրական:

Հ. Որպէ՞ս կեաս յ՚Յիս վերայ:

Պ. Խոհեմութը՝ և Զօրութը:

Հ. Զի՞նչ է խոհեմութի. ուստի՞ ծնաւ, և զի՞նչ գործս ունի:

Պ. Խոհեմութի է հանճար մտաց, որով կարէ ոք զինքն աջողակի կառավարել՝ և զայլս ուղղել. ծնաւ սա ՚ի փորձուութէց՝ և ՚ի պատմաբանութէց. գործ և պաշտօն սորին է, խորհիլն՝ և ընտրելն ըզ չարն, և զբարին, և զամենայն որինչ ՚ի կենցաղումն է, գովելըն՝ և պարսաւելըն. ՚ի կիրարկանել բարւոք զամենայն բարիս. յիշելն ՚ի դէպ ժամանակի զպիտանիսն՝ և զանպիտանս:

Հ. Զի՞նչ է զօրութի. և քանի՞ մասունս ունի:

Պ. Զօրութի է ույժ մտաց և յօժարութի կամաց, որով ոք բարւոք կեայ՝ և կայ. զերկուս մասունս ունի, զառաքինութի՝ և

զհամեստութի. առաքինութի
է բարեպաշտութիւն յԱծ, և
առ Ած. որ՝ ուղիղ կրօն յԱս-
տուած և ուղիղ գիտութի Այ։
Իսկ՝ համեստութի է ուղիղ կե-
անք՝ի բարեշաւիղ վարս, և՝ի
պարկեշտագնաց քարս՝ ընթացս
և՝ի գործս, յօրինեալ՝ի սէր և
՝ի պարկեշտ կանոնս։

Հ. Քանի՞ ցեղ կրօն կայ ՝ի վե-
րայ այս աշխարհելի աշխարհհիս։

Պ. Չորք գլխաւորք. որ՝ Քրիս-
տոնէայ՝ Հրէայ՝ Մահմեդեայ,
և Կռապաշտի կրօն. Հինգեր-
որդն ոչ կրօն, այլ՝ ժանդ մահա-
բեր, և խանգարիչ համայն կրօ-
նից. նաև՝ վատթար ինչ՝ քանզ
վատթարն, որ է անած. զի ոչ
ինչ Ածութիւն ընդունի, ոչ
ճշմարիտ՝ և ոչ սուտ։

Հ. Ունի՞ս դու արդեօք կրօն. և
որպիսի՞ կրօն ունիս, ասա։

Պ. Այո ունիմ կրօն. և է իմ
կրօն՝ Ածպաշտութի, և Հաւատ
Քրիստոնէութեան։

Հ.

Հ. Զ՞ինչ է կրօն Ա՟ծպաշտութեան:
Պ. Է՛ պաշտօն պատիւ՝ և մեծարանք Ճշմարիտ Աստուծոյն. բոլորիւ սրտիւ, 'ի բոլոր սրտի, և 'ի բոլոր սրտէ գոհանալով փառաւորելով՝ և գովաբանելով զնա հանդերձ սբ՟՝ և ընտիր պաշտօնիւք:

Հ. Զ՞ինչ է Աստուած:
Պ. Էութիւն անեղ՝ և անձառ. Անութ՟ի անփոփոխ անհուն անչափ անսկիզբն անվախճան ամենիմաստ՝ և ամենախնամ Տէր. Արարիչ արարածոց՝ և Պատճառ պատճառաց: Էութբ՟՝ բննութբ՟ և Ա՟ծութբ՟ մի. իսկ Անձամբ՝ և անձնաւորութբ՟ երեք ի Հայր՝ Որդի՝ և Հոգի Սբ՟:

Հայր ոչ է Որդի: Որդի ոչ է Հոգի Սբ՟: Հոգի Սբ՟ ոչ է Հայր: Հայր է Ա՟ծ՝ Որդի է Ա՟ծ՝ Հոգի Սբ՟ է Ա՟ծ


ՀԱՅՐ
ԱԾ

Ած : Ոչերեք Ածք · այլ
մի Ած, և երեք Անձինք :
Այսմ Կրօն Աստուածպաշտու
թեն : Այսպէս գրեցին Մարգա
րէքն · այսպէս գրեցին Աւետա
րանիչքն :

Հ · Որպէ՞ս արար Աստուած զա
րարածս՝ և զստեղծուածս :

Պ · Բանիւն խօսով : զի նա
ասաց՝ և եղեն · հրամայեաց՝ և
հաստատեցան : Սաղմոս 148 · տ 5 :
Նուարդ՝ Ած նախ ասաց · եղի
ցի լոյս : Բ՝ եղիցի հաստատութի
'ի մէջ ջրոցդ : Գ ժողովեսցին
ջուրքդ 'ի ժողով մի · բղխեսցէ
երկիր զբանջար խոտոյ : Դ եղի
ցին լուսաւորք 'ի հաստատութե
երկնից : Ե՝ հանցեն ջուրք զե
ռունս շնչոց կենդանեաց : Զ հան
ցէ երկիր շունչ կենդանի ըստ ազ
գի չորքոտանի · և եղև այնպէս :
Ապա ասաց Ած ·
Արասցուք մարդ՝ ըստ պատ
կե

կերպ մերում, և նմանութե. և իշխեսցէ ձկանց ծովու՝ և թռչնոց երկնից՝ և անասնոց՝ և ամ երկրի՝ և ամենայն սողնոց, որք սողեն՝ ի վր երկրի: Ծն. 1. 26:

Աստէ՛ յայտնապես երևի խորհուրդ Ամենասուրբ Երրորդութեան. զի բաւք այնոքիկ Արարցուք՝ և ս ըստ պատկերի մերում, յայտնեն զյոլովութիւն Ածային Անձանց:

Նաև յայտնապես երևի՝ զի մարդն ստեղծեցաւ ըստ նմանութեան Աստուծոյ՝ զի մարդն տիրէ՝ և իշխէ երկրի. և ս նմանութե Երից Անձանցն՝ քանզի մարդն ունի կարողութի իմաստութիւն, և սէր:

Հ. Ե՞տ Ած մարդոյ զօրէնս:

Պ. Այո. ետ Ած մարդոյ կրկին զօրէնս՝ Բնական, և Գրական: Բնականն է անփոփոխ՝ և հասարակ

րակ ամենայն ազգաց. և է յոդ-
նադիմի։ Իսկ՝ Դրական օրէնքն
է Հին՝ և Նոր Կտակարանն։
Հ. Քանի՞ տեսակ գրեանս ու-
նի Հին և Նոր Կտակարանն։
Պ. Չորս, և են այսոքիկ. Գիրք
Օրինաց՝ Պատմութեան՝
Իմաստութեան՝ և Մար-
գարէութեան։

Քեզ օրինակ ՚ի Նորում Կտակարանի։
Չորք Ս. Աւետարանքն՝ են Գիրք
Օրինաց։ Գործք Ս. Առաքելոցն
է Գիրք Պատմութեան։ Պօղո-
սի՝ և Կաթուղիկէից Թղթքն
են Գիրք Իմաստութեան։ Տե-
սիլքն Յօհաննու՝ Գիրք Մար-
գարէութեան։

Այսպէս ևս բաժանի Հին Կտակարանն։
Հ. Քանի՞ տեսակ Թարգմանու-
թիւն ունի Ս. Աստուածաշունչն։
Պ. Չորս գլխաւոր. ա̄ Նկարա-
գրէն. բ̄ Հաւատոյն. ըստ Յու-
սոյն, և գ̄ Սիրոյն։ Ս. Յերոնիմոսէ։
Պատմական՝ որ է ըստ Նկարա-
գրէն

գրին. Դարձուածական, ըստ Հաւատոյն. Վերնական, ըստ Յուսոյն. Բարոյական՝ ըստ Սիրոյն: Որպէս օրինակ:

Երուսաղէմ. որ ըստ Նկարագրին՝ և ըստ Պատմութեան՝ է քաղաքն Պաղեստինացւոց, ուր Ազատիչն Տէ՛րն մեր Յս Քս ծնաւ՝ և կատարեաց զամ Տնօրէնութին, Դարձուածօրէն և ըստ Հաւատոյն է Քի Սբ Եկեղեցին՝ և ժողովուրդն, որ գոյ 'ի վերին աշխարհի. Վերնականօրէն և ըստ Յուսոյն՝ է Արքայութիւն Այ ըստ Սրբոց. Բարոյականապէս՝ և ըստ Սիրոյն՝ է Արդար՝ և սուրբ Հոգի մարդոյն:

Հ. Գիտէ՞ս զվեց դարս Տի:

Պ. Գիտեմ և ասեմ մի ըստ միոջէ Առաջին դարն է յ'Ադամայ մինչև 'ի Ջրհեղեղի վերջն տարիք. 1656:

Երկրորդն՝ զկնի Ջրհեղեղին մինչև ց' 75 ամն Աբրահամու, յ'որում խոստացաւ նմա զաւակ

են

են ամք երեք հարիւր վաթսուն 6 ։
Երրորդն՝ յ՚ամէ 75 Աբրահա-
մու մինչև ց՚ելն Իսրայէլի յ՚Ե-
գիպտոսէ ․ ամք 430 ։
Չորրորդն՝ յ՚ելիցն Իս՟ի մինչև
ց՚երրորդ ամն Սողոմոնի՝ յա-
ռաջ քան զ շինել տաճարին 519
Հինգերորդն 'ի չորրորդ ամէն
Սողոմոնի, յ՚որում հիմնեցաւ
տաճարն՝ մինչև 'ի 21 ամն Կիւ-
րոսի ․ կամ մինչև 'ի յետին Գե-
րութիւնն Հրէից ․ ամք 474 ։
Վեցերորդ դարն է 'ի յետին
գերութենէն Հրէից մինչև 'ի
ծննդն ՔՐԻՍՏՈՍԻ ․ են
ամք 538 ։ Լինին ուրեմն յ՚Ա-
դամայ մինչև 'ի Ծննդն Քրի
3983 ։ և 'ի Ծննդենէն Քրի
մինչև ց՚այսօր են ամք 1699 ։
Հ․ Ասացեր թէ՝ ունիմ և ս հաւ-
ատ Քրիստոնէութե․ արդ՝ ա-
սա ինձ, զինչ է Հաւատ Քրիս-
տոնէութեան ։
Պ․ Ի՛ հաստատուն հաւատով
հաւատալ թէ՝ ՔՐԻՍՏՈՍ
է

# է ՈՐԴԻ ԱՍ
# ՏՈՒԾՈՅ, և
# ՓՐԿԻՉ աշխարհի

ք. ըն̃ Ա̃ծային բնութեանն
է Ա̃ծ, Որդի Աստուծոյ և
Երկրորդ Գէմ Ա̃ծու՝
իսկ ըն̃ Մարդկութեանն,
որ անճառելի միաւորութբ̃
միաւորեցաւ ընդ Աստուա
ծութեանն, է Փրկիչ մեր
և ընդհանուր աշխարհի.
զի յղացաւ 'ի Հոգւոյն Սրբոյ.
ծնաւ 'ի Մարիամայ Կուսէն.
չարչարեցաւ, խաչեցաւ՝ և մե
ռաւ վասն մերոյ փրկութե̃. ի
ջեալ 'ի դժոխս՝ ազատեաց զբան
տարգեալ հոգիս. յարեաւ 'ի
մեռելոց. համբարձաւ 'ի յ'եր
կինս. նստի ը̃ն աջմէ Հօր Ա̃յ, և
գալոց է 'ի դատել զկենդանիս՝
և

և զմեռեալս․ որք միանգամայն
են Յօդք Հանգամանակք Հաւա
տոյն, զոր միշտ յԵկեղեցւոջն
միաբերան ասեմք։
Հ․ Քանապատիկ է Հաւատ
Քրիստոնէութեան։
Պ․ Երկպատիկ․ այսինքն՝ Կեն
դանի՝ և Մեռած Հաւատ։
Կենդանի հաւատն է հանդերձ
սիրով և բարեգործութբ̄․ իսկ
Մեռած հաւատն է առանց սի
րոյ՝ և բարեգործութեան։
Այսպէս՝ մեռեալ հաւատով
կարէ ոք հաւատալ զԱ̄ծ, նաև
հաւատալ Ա̄յ․ բայց՝ ոչ կարէ
հաւատալ յԱ̄ծ, զի առ այս պա
հանջի Կենդանի հաւատ, որ է
ը̄ սիրոյ միշտ կապակցեալ։
Քանզի՝ հաւատալ զԱ̄ծ՝ է և
նշանակէ թէ՝ գոյ մի Աստուած
երկնի՝ և երկրի Ստեղծօղ․ զոր
և Դևք հաւատան՝ և սարսին։
Յակ․ 2․ 19։ Հաւատալ Ա̄յ, է
հաւատալ բանից՝ և պատգա
մաց նորին, զի 'ի նմանէ ասա

ցան. այսպիսի հաւատ կարէ ոք
ունիլ առանց սիրոյ և բարեգոր
ծութե՛. իսկ՝ հաւատալ յ'Աստուած
է հաւատալով զԱստուած սի
րել՝ յ'Աստուած յուսալ՝ և Աս
տուծոյ Պատուիրանացն հնա
զանդիլ:

Հ. Քանի՞ են Յօդք Հանգա
նակին՝ և Հաւատամքին, որ յ'Ե
կեղեցւոջն միշտ ասի:

Պ. Են երկոտասան յօդք, ըստ
Թուոյ Երկոտասան Առաքելոցն՝
բայց՝ Հանգանակ Հաւատամքին
կարէ յ'երիս գլուխս բաժանիլ
այսպէս:

Առաջին գլուխն է Խոր
հուրդ Աստուածութեան՝ և ամե
նասուրբ Երրորդութե՛:
Երկրորդն՝ է Խորհուրդ
Տնօրէնութեանն Քրիստոսի:
Երրորդն՝ խորհուրդ ընդ
հանուր՝ և սբ եկեղեցւոյն:

Հ. Ո՞րինչ է ասելն՝ Հանգա
նակ: և քանի՞ ցեղ հաւատոյ
Հանգանակ գոյ:
Պ. Հանգանակ ասելն՝ է ժողովն
համառօտումն. զի յօդք հաւատամին
հաւաքեցան, և՛ ի մի վայր ժողո
վեցան յԱստուածաշունչ Սբ
Գրոց. և գոյ քառադրիմի հան
գանակ հաւատոյ, այսինքն:
Հանգանակ Առաքելոյն՝ որ ե
դև սահմանեալ յԱռաքելոց
յամի Տեառն 49:
Երկրորդ՝ հանգանակ Նիկիոյ
Ժողովոյն՝ զոր 318 Սբ Հարքն
յամի Տն 325 Ընդդէմ Արիոսի և
Արիոսական Հերետիկոսաց
հաստատեալք սահմանեցին:
Երրորդն՝ է ասացեալ՝ ի Սբր
բոյ Աթանասէ՝ Աղեկսանդրու
Եպիսկոպոսէ, յամի Տն 333:
Չորրորդ Հանգանակ Հաւա
տոյն է Կոնստանդինուպօլսեայ
Սբ Ժողովոյն, զոր 150 Սուրբ
Հայրապետքն սահմանեալ՝ և
հաստատեալ՝ վճռեցին Ընդդէմ
Մա

Մակեդոնի, և Համախոհացն, յՆ.Թ Տեառն 381:

# Հարց՝ և Պատասխանի Ուսումնական՚ի մէջ Հայկայ՝ և Պօղայ:

## Խորհած Թուոյ իմանալոյ այլ և այլ Օրինակ:

Օրինակ Գ. ուսանիլ Ընդոց:

| Հայկ: | Պօղ: | |
|---|---|---|
| Խորհեա՛ց. | Խորհեցայ. | 4: |
| Եռապատկեա՛. | Արարի. | 12: |
| Կիսեա՛. | Կիսեցի. | 6.6: |
| Ի՛ հաւասար կիսածդ. | Այո: | |
| Զմու կիսած բաժինն եռապատկեա՛. | Եռապատկեցի. | 18: |
| Որքան իննեակս ունի բազմացուցածդ. | Երկուս: | |
| Ուրեմն քոյ առաջին խորհած թիւն էր 4. | Այո: | |

Ո է յայսմ հերքէ՝ որքան իննեակ, այնքան երկեակ համարէ:

Օ

Օրինակ Փորձ Ընդոյ։

| Հայկ։ | Պօղ։ | |
| --- | --- | --- |
| Խորհէք․ | Խորհեցայ․ | 3։ |
| Երեքում բազմացն․ | Երկու․ | 9։ |
| Կիսէ․ | Կիսեցի․ | 5,4։ |
| Կիսածդ բարաբարէ․ | Ձէ։ | |

Ըստ Հայկ'ի մտի պահէ ըմ միայն Ըխու։

| | | |
| --- | --- | --- |
| Կիսածի մեծ բա ժիննն երեքպատկեա․ | Երեքպատ նեցի․ | 15։ |
| Որքան ինն ունիս․ | Ո՛չ միայն։ | |

Ուրեմն քոյ խորհածն էր 3․ այս։

Ուր որչափ ինն՝ այնչափ երկու, և մին համարն՝ որ 'ի մտի պահեցի։

Մերոյգրեալ կերպն երկու ան գամ բազմապատկէ, միանգամ կիսէ․ և որքան ինն՝ այնքան եր կու համարի։

Բայց այս ներքոյ գրեալ կերպս երկիցս բազմապատկէ՝ երկիցս կիսէ․ և որքան ինն, այնքան չորք համարին․ և յ'առաջին կի սելն (եթէ կիսածն իցէ անհաւ ասար․) զմի միայն թիւ պահէ 'ի մտի, իսկ՝ յ'երկրորդ անգամ կի

կիսելն՝ զերկուս Թիւս պահել՚ի մտի, որք ե̃ Թւոյ ընծեկայն յետոյ խառնել Գուշակօղն։

Գաղափար Գործոյ Բնոյ։

| | | |
|---|---|---|
| Խորհեա՛. | Խորհեցայ. | 4: |
| Երեքպատկեա՛. | Եղեւ. | 12: |
| Կիսեա՛. | Կիսեցի. | 6,6: |
| Բաւարա՞ր է. | է Բաւարար: | |
| Մին բաժինն Երեքպատկեա՛. | Երեքպատկեցի. | 18: |
| Կիսեա՛. | Կիսեցի. | 9,9: |
| Բաւարա՞ր է. | է Բաւարար: | |
| Կիսածն իւր մին բաժինն քանի՛ ինն ունի. | Մի միայն: | |

Ուրեմն՝ քոյ առաջին խորհած Թիւն էր 4. Նոյնպէս էր Զէ յ'այսմ նշանէ՝ որքան 9, այնքան 4

Օրինակ Փորձ Բնոյն։

| | | |
|---|---|---|
| Խորհեա՛. | Խորհեցայ. | 3: |
| Երեքպատկեա՛. | 3 պատկեցի. | 9: |
| Կիսեա՛. | Կիսեցի. | 5,4: |
| Բաւարա՞ր է. | Ոչ: | |

Լաւ՝ մի միայն Բնոյ ՚ի մտի պահել։

Կիսածի մեծ բաժինն Երեք

Երեք

երեքպատկեմ. պատկերս. 15:
Կիսեմ. Կէսերն. 8,7:
Բարաքանր է կիսանդ: Ձէ:
Բաց՝ յ'երկրորդութեան ՚ի մտի պահեմ սեր
նոր ընտրո:
Բազմեմ 9 ունի կիսածի մեծ բա
ժինն. Նոքուն Ձ:
Սուրեմն քո առաջին խորհածն
էր 3 Թիւ. Ստոյգ է:

Բ. ձև հերոց:

Խորհեմ. Խորհեցայ. 3:
Կրկնեմ. Կրկնեցի. 6:
Դնեմ վերայ 4 ևս. Դրեր. 10:
Հնգով բազմացի. Բազմացուցի 50
Կցեմ հետն 12. Կցեցի. 62:
Տասնով բազմացի. Բազմացուցի՝ 620
Բառնեմ զողջն. Մնաց հարիւր 20:
Նոյ յետոյ լուելեայն մտօք բառ
նամ 320 ՚ի 620 Թւոցն, մնան
300. ուրեմն խորհուծ Թիւն էր 3

Բ. ձև հերոց:

Միտք արա. Միտ տարի. 5:
Կրկնեմ. Կրկնեցի. 10:
Հինգ ևս դնեմ վերայ. Դրի՝ 15

Հնգով

Հնգամեայ բազմացն. Աշխա. 75:
Դրիր հեռամն 10 լուս. Դուրէ. 85:
Տասնամեայ բազմացն. Աշխա. 850
Բանի է ամենն. Սուրբ հարբեր 50

Լուսնեայն ես մոքս բաւնամ 350 'ի 850 թվոցն, մինան 500. ու րեմն քոյ խորհած թիւն էր 5:

Գոռուզակոտումն խորհած ատուր Ճաշխա Նուան:

Խորհիր. Խորհեցայ. Ուրեմն:
Բհուր թիւն կրկնեամ. կրկնեցի 12
Ներադիր արայ 5 թիւ. արարի 17
Բազմացն հնգամեայ. Ելա. 85
Բազմացն տասնամեայ Լուս. Ելա՝ 850:
Բանի հարիւր ունիս. Սուրբ:
Նսծածուկ մոքս 200 կամ 250 դուրս ձգեմ, մինան 600. ուրեմն վեցերորդ օրն, այսինքն՝ Ուրբաթ օրն է քոյ խորհած օրն:

Նշանաւորութեան:

Նսծնայ զկինն իմ. գուստր իմ ծնաւ զհայրն իմ:
Մեռեալ է, և չէ թաղեալ. յերկրի է, և չէ նեխեալ: կինն Ղովտայ:

Կե

Կենաց եմ պատճառ, և մահու
ատիթ. մերձ եմ յԱ՞ծ, և ոչ
հեռի ՚ի սատանայէ: գինին:

Որ ինչ կենդանի էր՝ խոտ ուտէր
երբ մեռաւ՝ միս մարդոյ էկեր:
Սամսոնի էշոյ ծնօտն է:

Թոռան մերձեցաւ յանկողինս
հանրկան. աւաղ հանիկն, մի մեր
ձեռնար յ՚իս՝ զի կոյս եմ:
Աբէլ է՝ որ քան զԱդամ յառաջ եմուտ
՚ի հող:

Նամ, որ ինչ էի. չէի՝ որ ինչ եմ.
արդ ասիմ երկաքանչիւրն:
Յիսուս Քրիստոս:

Տղայական Պարապմունք:

Երամ մի հաւ արածէր ՚ի դաշ
տի. և յանցանել ընդ այն այլ
միւս հաւուն, ողջունեալ զնոսա՝
ասաց. բարև ձեզ հարիւր հաւ:
և նոքա ասացին. մեք ոչ եմք Ճ
հաւ. այլ՝ մեք. և քան զմեզ. և
քան զմեր կէսն. և կիսոյ կէսն.
և դու ևս ընդ մեզ. ապա լի
նիմք հարիւր հաւ: արդ՝ խմն
քանի հաւ էին ՚ի դաշտին: 36:

Պա

Քառասուն մարդ գնացին 'ի բաղնիս։ Բաղնեպանն էառ 'ի նոցանէ 40 ըստակ. բայց՝ երեք տեսակ մարդ էին բաղնիս գնացողքն. մին տեսակ մարդն հատոյց կէս կէս ըստակ. մինն՝ մին մին ստակ, և մին տեսակն՝ երկու երկու ստակ։ Եթէ կամիս իմանալ թէ՝ յ'ամէն տեսակէ քանի՛ մարդ կային 'ի բաղնիսն. էին 20 մարդ՝ կէս կէս ըստակ տվօղ. 10 մարդ՝ մէկ մէկ ստակ տվօղ. և 10 մարդ՝ 2, 2 ստակ տվօղ։

Մին մարդ ունէր իւրն հետ մին գառն, մին գայլ՝ և մին խուրձ խոտ. իբրև էհաս 'ի գետափն ը̃ գետն անճնպս անցոյց զնոսա այսպէս. յառաջ անցոյց զգառն միայն, յետոյ՝ զխոտն միայն՝ և եբեր յայսկոյս կողմն գետոյն ըզգառն, թողեալ ա՛ստ գայլն՝ անցոյց զգայլն միայն, ապա եկն՝ և զգառն վերստին անցոյց։

Ծեր ոմն օրհնեաց զմանուկ մի՝ և ասէ. ապրիս՝ որքան ապրե

ցար

ցար, և այլ այնքան կեցցես, ե
րիցս և ս այնքան. նաև՝ Աստու
ած յաւէլցէ քեզ զմինն 'ի տա
րեացս իմոց, որ լիցիս հարիւրա
մեայ։ Թէ կամիս իմանալ՝ որ
քան ամեայ էր մանուկն այն։

Նոր ուխամեայ, և երեք ամսեայ։

Մ՝ին մարդ ունի մին ութ ղտրա
նոց աման՝ լի ձիթով. կամի կի
սել զայն ձէթն, և ունի երկու
այլ որիշ աման, մէկն 3 ղտրանոց
և մէկն 5 ղտրանոց. այս երկու
ամանաւս զայն ութ ղիտր ձէթն
այսպէս կիսես։

Յառաջ լից 3 ղտրանոցն՝ և թա
փէ՛ 'ի հինգ ղտրանոցն. դարձեալ
լից երեքանոցն՝ և թափէ՛ 'ի հըն
գանոցն, և մնայ երեքանոցումն
1 ղիտր. թափեա՛ զհնգանոցն
որ լի է, 'ի մէջ ութանոցին, և
զմի ղիտրն՝ որ մնաց յ'երեք ղտրա
նոցն, լից 'ի հնգանոցն. յետոյ
լից միւսանգամ 3 ղտրանոցն՝ և
թափէ՛ 'ի հնգանոցն. և լինի 4
ղիտր 'ի հնգանոցն՝ և 4 յ'ութա
նոցի մէջն։ Սա

Սապէս՝ չորս քարիւ կարելի է ա
մենայն ինչ կշռել՝ 'ի մէկ ղտրա
նոյէն մինչև 'ի 40 ղտրանոյն .
բայց՝ չորս քարքն իցեն այսքան
ղտրանոց . 1 . 3 . 9 . 27 :

Նոյնպէս՝ հինգ քարիւ՝ կշռելի
է ամ ինչ 'ի 1 ղտրանոյէն մինչև
'ի 121 ղտրանոյն . և հինգ քարն
իցէ այսքանանոց . 1՝ 3 , 9 , 27 , 81 :

Նայապէս՝ վեց քարիւ կարէ ոք
կշռել զամ ինչ 'ի 1 ղտրանոյէն
մինչև 'ի 364 ղտրականն . վեց քա
րինքն իցեն այսքանանոցք . 1 . 3
9 . 27 . 81 . 243 :

Այսուհետև տղայական խաղ՝ որով 3 երից
յ'երեց անձանց նախագուշակեալք՝ չորրորդն ա
սասցէ ով ունի նախագոյն յ'երեց իրացն :

Իցեն 3 անձինք՝ Արամ Հայկ և
Տիգրան խաղացողք , իսկ՝ Ար
շակ չորրորդ անձն խաղի գուշա
կող՝ կամ մարգարէ :

Իցեն և ս 'ի մէջ խաղացողացն
3 իրք , թէ՝ փայտեայ՝ և թէ՝ քա
րեայ , կամ յ'այլ ինչ նիւթոյ իցէ
իրն գաղելի . առնմք թէ՝ իցեն
մին

մին հայելի . 1 դանակ . 1 խնծոր
կամ այլինչև իցէ՝ ը՟ հաճոյից ։
Դիցեն ևս 'ի մէջ Խաղացողաց
24 մանր քար՝ կամ սիսեռն՝ և
կամ այլ մանր ինչ՝ որ համարի ։
Յետոյ՝ Արշակ՝ որ է գուշակողն
'ի մտի իւրում տպիցէ՝ և պահի
ցէ զանուանս երից գաղելի իրաց
այսպիսի Այբուբենի գրովք .
Ա . Բ . Գ ։ իսկ՝ զերիս խաղա
ցողանձինս 'ի մտի իւրում ձևի
ցէ այսու կարգաւ . 1 . 2 . 3 ։ որ է
առաջին . երկրորդ . և երրորդ
անձն . Արամ, Հայկ՝ և Տիգրան
կամ ուրոքև իցէ ։

Իսկ յառաջ քան զ գաղել երից
իրացն յ'երից անձանց՝ Արշակ
որ է գուշակողն, 'ի միջի եղեալ
24 համարելի մանր քարանցն տա
ցէ առաջնոյն մին քար . երկրոր
դին՝ 2 . երրորդին 3 քար տացէ ։
Ապա՝ Գուշակողն տացէ երից
անձանցն զայս պատուէր . ուրոք
'ի ձէնջ Թաքուցանէ Ա., առցէ
'ի միջի եղեալ 18 քարանցն զայն

քան

քանքար՝ որքան ինքն ունի. որ
գաղէ Բ., երկիցս այնքան քար
առցէ՝ որքան ինքն ի ձեռին իւ
րում ունի. իսկ՝ որ առնու Գ.,
չորս անգամ այնքան քար կալցէ
որքան ինքն ունի. մնացեալ քա
րինս թողցեն 'ի յայտնի, և 'ի
բացատեղւոջ. որ լինի անխախտ
մինն յ'այս թիւոցս 1.2.3.5.6.
7: Յետոյ՝ ինքն Արշակ զերիս
իրսն, և զերիս անձինսն բարւոք
զմտաւածեալ՝ և տպեալ կար
գաւ 'ի մտի իւրում, հեռանայ
ցէ սակաւ ինչ՝ մինչև երեքեան
անձինքն գաղեսցեն զերիս իրսն
ըստ հաճոյից իւրեանց, և կոչեսցի
ինքն 'ի տես զմիջի եղեալ քարսն
և 'ի գուշակումն մնացեալ քար
անցն, թէ՝ ով զինչ գաղեաց:

Երբ Արշակ դառնայ՝ և տեսա
նէ զմիջի մնացեալ քարսն. թէ
մին քար է՝ մնացեալ՝ առաջինն
ունի Ա. երկրորդն ունի Բ.
իսկ երրորդն ունի Գ.: Իսկ՝ մնա
ցեալ քարանց գուշակումն տե՛ս
յ'աղիւսակոջս:

| Պ. օրէնք։ | Ա. նչէնք։ | Իրք։ |
|---|---|---|
| | 1 | Ա։ |
| 1 | 2 | Բ։ |
| | 3 | Գ։ |
| | 1 | Բ։ |
| 2 | 2 | Ա։ |
| | 3 | Գ։ |
| | 1 | Ա։ |
| 3 | 2 | Գ։ |
| | 3 | Բ։ |
| | 1 | Բ։ |
| 5 | 2 | Գ։ |
| | 3 | Ա։ |
| | 1 | Գ։ |
| 6 | 2 | Ա։ |
| | 3 | Բ։ |
| | 1 | Գ։ |
| 7 | 2 | Բ։ |
| | 3 | Ա։ |

Այսքան առ այս մասս բաւանեցի վասն տղայական խաղից ։

Դուռն

Գրոցն Ռամլին, որ է՛ տեսակ մի
Գուշակութեան ։

Լահիան ։ 1
Պարզի դախիլ ։ 2
Պարզի խարիջ ։ 3
Ջամաաթ ։ 4
Յօղլայ ։ 5
Ֆարհա ։ 6
Ընքիս ։ 7
Հումրա ։ 8
Բայեազ ։ 9
Նուսրաթի խարիջ 10
Նուսրաթի դախիլ 11
Յաթաբի խարիջ ։ 12
Յաթաբի դախիլ ։ 13
Նախլղաթ ։ 14
Իջթէմա ։ 15
Թարիխ ։ 16

Անուանք՝ Ձևք՝ և Թիւք՝ Սա
մին համարով են 16. ը̅ որում՝
վերոգրեցան:

Որք մեծամեծ գրովք շարեցան
դար՝ և զոյգ կէտս ունին, իսկ
այլ գրովքն կոճատ՝ և անզոյգ
կէտս ունին:

Բովանդակ 16 Սամիի ձևքն՝ 96
կէտս ունին. և մէկ խաղն երկու
կէտ համարի:

Ի 16 ձևոցն այլքն ասին դախիլ
և են 2.7.11.13: այլքն՝ խա
րիջ՝ 1.3.16.12: այլքն՝ ասին
Թաբիթ, այ̅՝ հաստատք 4.8.9
15: այլքն՝ մունղալիբ 5,6,14՝ 16

Արեգական տունն է 10.11:
Լուսնոյն՝ 4.16: Լուսնթագին
1.2: Լուսաբերին, 3.14: Փայ
լածուին՝ 9.15: Հրատին՝ 5.8:
Երևակին՝ 6.7:

Խոյի տունն է 2: Ցլոյն՝ 10.11
Երկաւորին՝ 1: Խեցգետնոյն՝
8.14: Առիւծոյն՝ 9: Կուսին 16
Կշռին՝ 13.15: Կարիճին՝ 5.
Աղեղնաւորին՝ 3.7: Այծեղ

ջերն՝ 12։ Դորհոսին՝ 4։ Զոր
կան տուննն է՛ Փարա։

Ովոք տենչայ կերպիւ իմիք
վերահասու լինել Սմահարու
թե արհեստին՝ ոպ̃ եւ այլ Դիւց
ազնաբանութե տեսակացն. ոպ̃
Գրադիւթութե, Օդադիւ
թութե, Հրադիւթութեան,
Ոխսադիւթութե, Մաղադիւ
թութե, եւ այլ գուշակելի իրայ
Գուշակութե. պարտի իմանալ
զերկոտասան տանց երկնից էու
թիւնն. որոց Զեն, եւ մեկնու
թիւնն կարճառօտաբար այս է։
Երկոտասան տանց երկնից Զե
ակերպութին՝ ը՜ Միջօրեայ, եւ
Վերջաւորող գիծն՝ բաժանի
'ի չորս հաւասար մասունս. ոպ̃՝
Արեւել՝ Արեւմուտ՝ Հիւսիս, եւ
Հարաւ։
Իւրաքանչիւր մասն յ'այլ երիս
տունս բաժանի. որոց անուանք
եւ զօրութիւնք են այսոքիկ։
Առաջին մասն կալնու յ'ա




րևելից մինչև 'ի յ'երկնամիջակ
կէտն, կամ 'ի միջօրեայ գիծն։
Ունի 12. 11. 10 տունսն։
Այս մասն անուանի Արևե
լեան, Գարնանային, արական,
մանկական, և արիւնեայ։
Երկրորդ մասն կալնու յ'երկնա
միջակ կիտէն մինչև ց'Արևմուտ
և ունի 9. 8. 7 տունսն։
Այս բաժինս անուանի Հարաւ
ային, ամառնային, իգական, և

րի

րիտասարդական, և մաղձոտ։
Երրորդ մասն կալնու յ'արևմտից մինչև ց'եթերական կէտն։ Այս մասն ունի 6 . 5 . 4 տունսն. և անուանի արևմտեան, աշնանային, արական, և սևամաղձ։
Չորրորդ մասն կալնու յ'Եթերական կիտէն մինչև ց'արևել։ Ունիսա 3 . 2 . 1 տունսն. և անուանի հիւսիսային, Ձմեռնային, սուզական, և մաղասոտ։

Առաջին տունն ասի արևելեան անկիւն, Վամադիտակ, Ծագող զօրեղ՝ և քաջոյժ. Նշանակէ զհոգւոյ՝ և զմարմնոյ իրս։
Երկրորդ տունն ասի՝ յաջորդ, և մերձաւոր անկիւնաւորաց. Նշանակէ զինչս՝ և զապրանս։
Երրորդն ասի անկ՝ և վատոյժ. Նշանակէ զեղբարս՝ ճանապարհս և աղանդս, կամ կրօնս։
Չորրորդն՝ սուզական անկիւն. Նշանակէ զմնացական բարիս, ըղհայր՝ պապ, և զժառանգութիւն 'ի մեռելոց։

Հինդ

Հինգերորդ տունն ձայնի յաջորդ. Նշանակէ զաւակս՝ և զխընդութիւնս։

Վեցերորդ տունն կոչի՝ անկ արևմտեան, և վատոյժ. Նշանակէ զհիւանդութիւնս՝ ծառայս՝ և փոքր կենդանիս։

Եօթներորդն անուանի՝ անկիւն արևմտեան, և նշանակէ զմահ զկին՝ և զ յայտնի թշնամիս։

Ութերորդն՝ է յաջորդ, և նշանակէ զժառանգութի՟ 'ի մեռելոց։

Իններորդն՝ է անկ, և վատոյժ. Նշանակէ զկրօնաւորութի՟, մեծութի՟, և զերկար ճանապարհ։

Տասներորդն՝ է. անկիւն եթերական, և նշանակէ զիշխանութի՟ պատիւ, հնարագիտութիւն, և զաւակս։

Մետասաներորդն՝ յաջորդ ձայնի և նշանակէ բարեկամութիւն և քաջաբախտութիւն։

Երկոտասաներորդ տունն ասի անկ, և վատոյժ. Նշանակէ գաղտնի թշնամութի՟, տխրութիւն, բանտ

բանտ և մեծամեծ անասնոց դև ։

Մեկնութիւն 16 անուանցն Ռամլն ։

Լահիան․ ցնծութին, խնդութին ողջութին, օդային, և արական ։

Պաքզի դախիլ․ ընտացուած, ներսառու՝ և միշտ բարի ։

Պաքզի խարիջ․ կորուստ, արտաքսառու՝ և միշտ չար ։

Ջամաաթ․ ժողովուրդ, հաստատութի, և բախտ ։

Յօղլա․ բանտ, նեղութիւն՝ երկաթ, գող՝ և հող ։

Ֆարա․ մանուկ, դեղին, մատաղ՝ և կապուտ ։

Հումրա․ կարմիր, և շէկ ։

Բայեազ․ սպիտակ, և լաւ ։

Նուսրաթի խարիջ․ սակաւ բախտ՝ թերիօգնութիւն, նաև միշտ չար ։

Նուսրաթի դախիլ․ լիօգնութի մեծ բախտ, և միշտ բարի ։

Յաթաբի խարիջ․ արտաքսասեմ, տուտ վիշապին՝ և միշտ չար

Յաթըբի դախիլ․ ներքսասեմ, գլուխ վիշապին՝ միշտ բարի ։

Նախլդաթ

Նախլղաթ. գեղեցկադէմ, և կոյս, ջրային։

Իջթէմա. շաղկապ՝ միաւորուն և մեծ ուխտ։

Թարիխ. ճանապարհ, ջրային։

Վերտառութիւն Ներքնային երկրաչափատանց Զնակերպութեանն։

Զարկ Ռամլն 'ի լման՝ ըզտասն վեց տունսն. և տես զտասն վեց երորդ տան կենդանկերպն, թէ՝ զինչ է. գիր զայն կենդանկերպն յ'առաջին՝ յ'արևելեան անկիւնոջ՝ և 'ի ժամիգէտ տան երկնային կամարին. զհետևեալ կենդանակերպսն գիր ըն հետևել տունսն՝ այսպէս ԺԶ կարգին։



Տան վեցերորդ տունն է Յա
Թաքի խարիջ. որոյ կենդանա
կերպն է կշիռն. ուրեմն դնեմք
յ'առաջին, և 'ի ժամադիտակ
տանն զկշիռն. յ'երկրորդ տան
զկարիճն. յ'երրորդ տանն զա
ղեղնաւորն, և զայլ մնացեալ կեն
դանակերպսն ըն հետևեալ երկ
նաձևի տունսն ԺԲ կարգին։

Սապէս վասն մոլորականացն։
Զարկ զաւմն 'ի լման զ 16 տունս
և զկէտսն երկոտասան Թուոյ
բաժանեա. որինչ մնայ՝ դիր
յայնքանորդումն տան, քանորդ
է Թիւն. որ՝ Թէ 1 մնայ, յ'առա
ջին տանն դիր. Թէ 2, յ'երկրոր
որդ տանն. Թէ 12, յ'երկոտա
սանորդումն տան դիր, և զայլսն
տեղաւորեա ԶԷ մոլորականց կար
գին, որ յ'այսմ արհեստի այսպի
սեաւ կարգաւորի։
Արեգակն, լուսին, լուսաբեր,
փայլածու, երևակ, լուսնԹագ
հրատ՝ գլուխ և տուտ վիշապին։
Ապա տես զգուշակելին ըստ ար
հեստի քում։

Տէրութիւն, և իշխանութիւն
մոլոր աստեղայն, թէ՝ ո՛յք որոյ՝
յ՛օրժամ, կամ ո՛րպէս տիրիցեն
երկոտասան կենդանակերպիցն
տե՛ս զորինչ գրեցինք ՚ի պատճա
կան Տօմարի մերում, որ մակա
գրեցաւ՝ Համաչափութեան Հնգե
տեսակ Մ.ծաց. և տպեցաւ յ՛Մ.մի
Տն 1699 յ՛Ա.մստրդամ քաղաքի
Աւ յուքան առ այս ա՛ստ՝ և այժմ բաւական եցէ:
Եւ այսք ամենայնի ճշմարիտ՝ միայն Աստուած գիտէ:

Բարք ոմանց կենդանեաց:

Առիւծն է ազատական՝ հաճոյա
կան, ընտելական, յաղթասէր՝
հզօր՝ արդար՝ գթոտ՝ հպարտ՝ և
գիշատող:
Փիղն կամ Ֆիլն է խոհեմ, դաւ՛
աձան՝ և նախանձայոյզ:
Աղուեսն՝ վրէժխնդրու, և զչարա
ցող:
Երիվարն՝ կամ ձին է փոփոխա
կան, մեծամիտ, ներսդիմօղ՝ ար
շաւօղ՝ սրտմտօղ՝ և մնապարծ.

Լոշն

Էշն է աղտեղի, խոտելի, ծոյլ՝
հլու բղջախոհ, համբերող՝ ան
զգայ՝ և երկայնակեաց։
Վարազն՝ որ է վայրի խոզն, դժ
նեայ՝ և արիւնահեղ։
Խոզն՝ վաճաշոտ՝ երկրասէր՝ ան
յագ խուլ աղտեղի և բղջախոհ։
Ինծն՝ ամբարտաւան չարասիրտ
քինքուշ՝ գոռոզ՝ նենգաւոր՝ վըս
տահ, և երբեմն երկչոտ։
Արջն՝ որկրամոլ՝ կլանող՝ խստա
բարոյ՝ բղջախոհ, կատաղի՝ վայ
րաքնակ, խորամանկ, նենգաւ
որ, կեղծաւոր՝ և չարաշահ։
Գայլն՝ անհաշտ և յափշտակող։
Աղուեսն է խափշիկ՝ նենգաւոր
չարագործ՝ և դարանող։
Կապիկն՝ նենգժոտ՝ խաբեբայ՝
բղջախոհ, բամպառաւակ, ոխա
կալ՝ հեղձնող՝ և սրտայօդ։
Շունն՝ բարկացող՝ և ագահ։
Կատուն՝ գող՝ գաղտաւ փոքրա
հոգի, և վնասագործ։
Մուկն՝ քսու, և վնասող։
Նապաստակն՝ երկչոտ և զազիր

Կոզ

Կամնին՝ գաղտաու՝ և վերուծորեչ
Գորտն՝ զզուելիչ և վայրահնչու։
Օձն է խորամանկ, և եղբայրա-
տեաց։
Կարիճ, չարախեզու և կշտամբող՝
Ճանճ, զզուելի՝ և տրմարդի։
Սիրամարգն է փառամոլ։
Արագիլն՝ բութ և ուսումնատ։
Արծուին՝ ամբարիշտ և կլանող։
Բայլամն՝ ծոյլ՝ և անգոհ։
Ցինն՝ անհրաւու և բազմակուլ։
Ագռաւն՝ աներես և լեզուագար
Ընծեղն որ է Կաչաղակն՝ լեզուա-
գար, և շողոքորթող։

Ածանագէն Բնծնչական Դեղորայք։

Ս ...ան հալչէ։

1. Ոխտորն խորովեալ՝ և ըղ-պաճեղն՝ ի մեղր թաթախել կեր։
2. Մեղրով զխտորն եփել կեր
3. Խորոված բողկն տաքտաք մեղրով կեր. կամ զմարդն՝ գի-նին, և մեղրն Բ իրար խառնել կեր. և կամ զնուշն աղա, և մեղ-րով

րով խառնեալ. այգուցն՝ և երե
կոյի ժամուն մին մին դգալ կեր
մինչև երեք օր։

Վասն ճիճուի։

Բ'ռ զգեղձըրն՝ և զտերևն. քա
մեալ զխուր ջուրն. յառաջ խմեալ
զկաթն՝ որ ձիձուն 'ի կաթն յա
մէ. յետոյ խմեալ զգեղձն, որ հա
նէ զերկայն՝ զբոլոր՝ և զտափակ
ձիձուն։

Վասն ապականացանի։

Կանանց գործեան ձրագուն եթէ
յինքն հասուցանես՝ դուրս գայ.
կամ զեղձ խոտն եփեալ, և զբե
րանդ՝ իշերայ գոլոշւոյն կալ.
կամ զմանանեխն՝ և զընկուզն
անապակ գինւով եփեալ, և առ
'ի բերանդ։

Վասն ջրի, որ արեանն շտապարէ։

Սղկեալ զմէրմէուն՝ ոմն փոշի, և
լից 'ի քիթն. կամ պապուձ 'ի աս
տուննեըքինքերդ, լից 'ի քիթն

Բերան արգելլոյ դեռ բռուբեան։

Բ'րուն, մնա 'ի քեզ՝ ոմն Վ.ա_
րար յ'ինքեան։ Բ'րուն

Արիւն, մնամ ՚ի քում երակի՝ ով Տ՟ր յ՚իւրում պատժի:

Արիւն, մնամ սևեռուեալ՝ որպէս Տ՟ր, երբ ՚ի խաչին բևեռուեալ:

Նորէցս կրկնեամ:

Վասն ժամու:

Ուղտոյ մէզն 3 անգամ անօ-
թից խմեա, լաւանաս:

Վասն օձահարի:

Ի զգաղտրիկուան ծեծեա, դի՛ր ՚ի վերայ: 2. Պանիրն բարկքացախով տրորեալ՝ դի՛ր ՚ի վերայ: 3. Սատուտակն՝ որ է քաղցր մարախն, ծեծեա և դի՛ր ՚ի վերայ: 4. Խնծորի տերևն ծեծեալ՝ երեք անգամ դի՛ր ՚ի վերայ:

Վասն ոջլէ:

Ուսպանդի հունդ մին դրհամ աղա, և խառնեա ՚ի պխրու ճրագուն՝ և օծ զանձդ: կամ Մթունուան կեղևն և խնկի փոշի շերիկ ձիթով եռացո, և օծ զանձդ երկու անգամ ՚ի տարին:

Վասն որդանոց տնկոց:

Ծոր

Ծ՝ ծումբն ծխեամ. կամ թրջեամ ծծումբն՝ և միացո՛ ը̄ ջրոյն. ապա ցանեամ յուր կամիս՝ սատակին

### Վասն ճճւոյ.

Տատասկի ջուրն առ, ներկեա՛ զկտաւն՝ և առ՚ի վերեդ, կամ ձգե՛ ներքեւդ՝ լուք ոչ մերձենան

### Որ մազ ոչ բուսանի.

1. Ագռաւի ձրագուռմբն ած ուր և կամիս, մազ չի բուսանիլ.
2. Աղաւնւոյ լեղին յ՚որ տեղ որ քսես՝ մազ ոչ բուսանի.
3. Շան կաթն ուր քսես, մազ չի բուսանիլ.
4. Այծու լեղին նշադրով շաղեալ՝ ուր քսես, մազ ոչ բուսանի.
5. Կատուի չորացած աղբն փոշի արա, մաղեա՛, բարկ քացախի հետ մածեա՛, որ լինի թանձր օծուն. սովաւ շփեա՛ զթափելի մազն. ոչ երբեք բուսանի.

### [illegible]

1. Սվոք զվարդենւոյ արմատն յ՚ինքն պահէ՝ յ՚օձէ ոչ խածանի.

2. Ն

2 Եթէ զոք կատաղած շուն խա
ծանէ, զթթենւոյ տերեւն ծե
ծեալ դի՛ր 'ի վերայ խածածին ։

3. Որ դեղ մահու իցէ արբեալ
զտոտասկն ծեծել ջուրն խմէ ։

4. Օ պատասխան գաղեմ, և ըզ
շահն լուեմ. ովոք սովորի միշտ
սակաւ ինչ մեղ խմել. զխուրն՝
կամ զմատաղ ջերմն. 'ի բազում
ցաւոց ազատ լինի՝ առանց կար
ծեաց. գինին անգին՝ օգուտն ան
ձառ, պատասխան ասա անտեղի ։

5. Կարիճըն չորացուցեալ՝ և փո
շի եղեալ՝ կարձահարի դեղ է ։

6. Օ ովոք կարիճ հարկանէ,
աղ առնու 'ի բերանն՝ և ցուրտ
ջուր. փութով անցանի կսկիծն

7. Նա զկարիճըն կենդանի, և
դի՛ր 'ի փոքր շիշայ մի, որ իցէ ձի
թենի իւղով լի. որքան հընա
նայ այս ձէթս՝ այնքան ուժովա
նայ վասն նորոգ կարձահարի ։

8. Եթէ ոք հարկանիցի յ'օձէ,
'ի կարձաց՝ կամ յ'այլ թունալի
կենդանեաց. կալցէ կայծ մի հրոյ
մերձ

մերձ խածած տեղւոյն, մինչև
թոյնն 'ի մի ժողովեալ՝ և ուռու
ցեալ՝ պայթիցի ժայթն, և ազա
տիցի թունաւորեալն։

9. Ո՝ ոթրինն եփել քացախով
առ 'ի բերանդ. և զմանանեխն
ծեծեալ՝ քսեա՛ 'ի գլուխդ. զմո
ւացկոտութիւնն տանի։

10. Եթէ ոք զմազս առնացւոյ
իշոյն կամ զձուս մրջմանց առցէ
և մանրեալ 'ի գինի, տացէ ու
մեք ըմպել. իսկոյն սկսանի զկրի
տացիսն պիղծ թուուցանել։

11. Եթէ կամիս սպիտակացու
ցանել զանօթ ինչ՝ ծխեա՛ զայն_
պխսիսն ծխով ծծմբոյ։

12. Եթէ կամիս՝ որ պտուկ մի
կրակի վերայ ոչ եռայ. ձգէ գըն
տակ մի արձըձոյ 'ի մէջ պտկան։

13. Եթէ կամիս իմանալ զպատ
ճառ անծնելութե՛. արուն իցէ
թէ էգն. առ զ ջրվայթն երկո
ցունց յ'այլ և այլ պտուկս. և 'ի
նոսա մրկ սակաւ ինչ թեփ. և
ծածկեալ պահեսցես զաւուրս 9

ապսյ քամց զնոսա՝ և տես որոյ ա
մանուամն՝ և 'ի պտկան գտանիցեն
որդունք, կամ այլ ժիժմունք.
նաէ պատճառ անծնելութե ։
14 Եթէ ոք կամի գոյնզգոյն ձի
ծնուցանել. 'ի ժամ մերձաւորու
թե ծածկեսցի մատակն գունա
գոյն ծածկոցաւ. (Ծ͞ որուամ կա
մի ոք.) զի որպիսի գոյն ունիցի
ծածկոցն, նոյնգունակ ձիուկ
ծնանի ։ Ըստ այսմ սարասի կա
րելի է և զայլ կենդանիս փորձել ։
15. Եթէ կամիս որ բովանդակ
տունն խաղողալի երևայ. առ 1
շիշայ՝ և լից ձիթենի իւղով. և
յորժամ խաղողն դեռ ծաղիկ
է, մեկ ողկոյզ՝ կամ ճիւղ (որ
կտրած չի լինի յ'իւր որթեն ։)
դիր շիշայի մեջն. շիշեն յ'որթն
պինդ կապէ, և թող մինչև 'ի խա
ղողաքաղն. յետոյ քաղեալ խա
ղողոյն՝ լից այս ձիթենի իւղն 'ի
նոր ճրագի մեջն՝ և վառեա. բո
վանդակ տունն խաղո
ղալի երևայ ։

Մոմ սպիտակացուցանելոյ կերպ։

Առ դեղին մոմ, որքան կամիս՝ և երկու այնչափ աղբեր ջուր խառնեա՛ 'ի միասին և դի՛ր 'ի վերայ կրակին՝ մինչև որ սկսանիցի մոմն հալիլ. յետոյ թո՛ղ սակաւ ինչ դադարել որ բովանդակ հալեալ մոմն գայ՝ յ'երես ջրոյն. ապայ ա՛ռ աման մի ապակի՝ որ արտաքուստ ողորկ՝ և կոկ լինի. զապակի ամանն թա՛ց ցուրտ ջրով՝ և մինչև 'ի կէսն կոխեա՛ հալած մոմի մէջն, հա՛ն զապակի ամանն ը̃ իւր կպած մոմին. թո՛ղ որ այն կպած մոմն սառի. յետոյ բաժանեա՛ զսառուած մոմն յ'ապակի ամանէն։ Նաև այսպէս՝ այնքան կրկնեա՛ որ բոլոր մոմն յ'աւարտ հասանի։ յետոյ՝ այսպիսի կերպիւ սառուցեալ մոմն դի՛ր յ'արևն և 'ի գիշերեայ ցօղն մայիսի ամսոյն. յաճախ անգամանգամ շրջեա՛ զտարածեալ մոմն. և այսպէս՝ այնքան ժամանակ թո՛ղ՝ որ նման բամբակի սպիտականայ։

Բայց՝ եթէ արեւն իջէ սաստիկ ջերմ, որ հալիցէ զմոմն. երկիցս յ'աճուրն ցօղեա՛ աղբեր ջրով զտարածեալ մոմն։

Ի. Ժւ ե՞րն ներբ։

Դնե՛ր զմոմն յ'արեւն. հանապազ օր թա՛ց միանգամ աղբեր ջրով՝ յաճախ լը՛ա՛ զմոմն ջինջ՝ և մա քուր ջրով. յետոյ զմոմն շինեա՛ տափակ տախտակ բարակ որպէս թուղթ, որ արեւն լաւ 'ի ներսն մտանէ. և ունիցիս պայծառ մոմ որպէս ձիւն։

Լրագացոյց։

1. Ի. ձուլմն ուղակի. երագն բա րիէ՛ միշտ։

2. Ի. զմուկ՝ և կռիւէ՛. յ'ընկե րաց տրտմիս։

3. Չայն աւետեաց լսես. օտար վաստակ ուտես։

4. Ընդվայր մի՛ լսեր. շահիս 'ի քանեդ։

5. Դ.

5. Ի կանանց վէրք հասանին. ոխակալութիւն է։
6. Սէր տեսանես. յոյն բարի է։
7. Պատրաստ կաց. սուտ՝ և ը վայր է։
8. Ու ահագս բարձրանաս. ՚ի դրացեաց տրտմիս։
9. Ի չարէ պատրաստ կաց. մի մարդ հարկանի ՚ի քէն։
10. Յորդոր է, և ուրախ. առնուս զոր կամիս։
11. Ի տանէ փնասիս. միջակ է։
12. Րոյ ուրղակն շատանայ. հեռաւոր գայ։

Կանոն արեան թողլոյ. դեղ խմելոյ. բաղնիս գնալոյ. շինուած շինելոյ. որսալոյ. փայտ՝ և տախտակ կտրելոյ. սերմանելոյ. տնկելոյ, և պատուաստելոյ։

Մերոդրեալ Նորաշացոյցն, և հետևեալ առօրեայ իրաց կանոնս ըստ Լուսնոյ Կենդանկեր պից ընթացիցն գնան։
Ի Ներքոյգրեալ Կանոնսումս
Լ. նշանակէ՝ լաւ։ Մ. միջակ։
Վ. վատ։

## 12. Կենդանակերպքն :

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արե | լ | վ | վ | լ | մ | վ | լ | լ | լ | վ | լ | մ |
| Դեղ | լ | վ | լ | լ | վ | լ | լ | վ | լ | մ | լ | լ |
| Բաղ | մ | մ | վ | լ | լ | վ | վ | լ | վ | վ | վ | լ |
| Շինո | մ | լ | մ | վ | մ | վ | լ | վ | մ | մ | վ | լ |
| Որս | վ | վ | մ | մ | մ | վ | վ | լ | մ | մ | վ | լ |
| Կորե | լ | լ | մ | լ | վ | լ | լ | մ | վ | լ | վ | վ |
| Սերմ | մ | լ | լ | վ | լ | լ | վ | վ | վ | լ | մ | վ |

Կերպաւորութեան յառաջադրեր ցուցակս:

Կա՛լ զաւուրս լուսնոյն. կրկնեա՛ զքանիս լուսնոյն. 5 թիւ ևս ա՛ծ 'ի վերայ աւուրց Լուսնոյն:

Յետոյ՝ 5,5 թիւ տո՛ւր 'ի Կենդանակերպսն. յ'այնմ կենդանակերպէ թուելով՝ ուր Լուսինն ընծայեցաւ, և նորեցաւ. կամ ուր Արեգակն ներկայօրէն գըտանի. և զ կենդանակերպ լուսնոյն անսխալ գտցես:

Ապա տե՛ս քաներորդն է՛ լուսնի կենդանակերպն 'ի խոյէն համարելով. այնքաներորդ համարն ցուցանէ զքոյդ խնդիր:

### Բեղ օրինակ:

Յ'ամի

Յամի Տեառն 1700. Մայիսի 30. կամի ոք իմանալ, թէ Լուսինն յորում Կենդանակերպի իցէ, գիտասցէ. զի Մայիսի 30՝ Լուսինն է իբր 13. կրկնեսցէ ըզ 13. լինին 26. 5 թիւես վերադիր արասցէ. լինին 31. որ ունի 6 անգամ հինգ՝ և 1 թիւ աւելի մնայ։ Դարձեալ՝ գիտասցէ. զի մայիսի 30՝ Արեգակն է յԵրկաւորն. և այս առաջիկայ լուսինս յերկաւորութեան նորեցաւ։

Արդ՝ տուր մին 5 յԵրկաւորն. երկրորդ հինգն ՚ի Խեցգետինն երրորդ հինգն յԱռիւծն. չորրորդն՝ ՚ի կոյսն. հինգերորդն՝ ՚ի կշիռն. վեցերորդ հինգն է վասն կարիճ կենդանակերպին. մնայ մին աւելորդն վասն Աղեղնաւորին. ուրեմն՝ յայսմ ամի մայիսի 30 Լուսինն մտանէ յԱղեղնաւորն. որ է իններորդ կենդանակերպն ՚ի խոյէն համարելով։ Արդ՝ տես իններորդ համարն

մարն Նաւազացուցէն, որ ասէ. Պչարէ պատրաստ կաց. դու հարկանես զոգ։ Նաւ մուս կանոնի իններորդ համարն ասէ. Արևն Թողուլն՝ լաւ է. դեղորայս խմելն՝ վատ է. ըստ այսց և զայլոն կարգաւ իմա։

Մուտ Արեգական յ'երկոտասան Կենդանակերպսն։

Արեգակն 'ի 20, կամ 'ի 21 հետևեալ ամսոյս մտանէ 'ի կենդանակերպսն, այսինքն՝ Մարտի 'ի Խոյն. Ապրիլի 'ի Ցուլն. Մայիսի յ'երկաւորն. Յունիսի 'ի խեցգետինն. Յուլիսի 'ի յ'առիւծն. Նովեմբերի յ'աղեղնաւորն. Դեկտեմբերի յ'այծեղջիւրն։ Բայց յ'Օգոստոսի 21, կամ 22 մտանէ 'ի Կոյսն։ Նոյնպէս՝ սեպտեմբերի 'ի կշիռն. Հոկտեմբերի 'ի կարիճն։ Այլ Փեբրուարի 19 'ի Ջուկն՝ Յանուարի 20 'ի Ջրհոսն մտանէ Արեգակն։

Սախ

Վախճան պսակէ, զորինչ մարդ գործէ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ։

Աւարտեցաւ Շնորհօք Ամենազօրին Աստուծոյ իրաւի Ոսկեայ Դուռնս այս Այբուբենից. Քերականութեան. Ուսումնական` և Բանասիրական Հարցման, և Պատասխանւոյ. Սամահարութեան. Բարուց կենդանեաց. Աժանադին բժշկական դեղորայից. Թեթևագին գաղտնեաց. Նրաշացուցի և Հասարակական գործոց. մն դեռակիրթ, և խակավարժ մերազնեայ Մանկանց. ՅԱմի Տեառն 1700։ Որոց հաճոյ` և ընդունելի երևիցի այս լոմայասարաս աշխատ մեր. Շնորհոզինն` պատիւ, և գոհութի. իսկ որոց անախորժ, և քամահելի թուիցի. զանմեղադրելիս առցէ զմեզ

զմեզ՝ աղաչեմք · զի ձեր եմք միշտ, և յ'ամուրեք՝ որքան եմք ընչունակք, անարժան Դպիրք Մատթէոս՝ և Ղուկաս Վա-նանդեցիք:

ՅԱրևելից մինչև 'ի մուտս ա-րևու օրհնեալ է անուն Տն:

Յունարէն:

Ապօ անատոլօն հիլիու մէխրի դիսմօն, էնէտօն տօ օնոմա Կի-րիու:

Լատիներէն:

Ա սօլիս օրթու ուսքուէ ադ օկկասումը, լաւդաբիլէ նօմէն Դօմինի:

Ֆարսի:

Ա'զ մաշրիգ թա մաղրիբ՝ սը թուդա բաշէդ նամ Խուդա-վէնդ:

Գիւն դօղուշընդէն չախ գիւն բաթանա՝ Ալլահըն ադը օգու-լմջաք դուր: